

Կ Ր Ա Կ Ի Ւ Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ի Ն Ք

Այս գաւառում ևս կրակի պաշտաման վերաբերութեամբ մեացել են դրեթէ այն բոլոր հետքերը, որ նկատել եմ Վարանդայի և Բորչալուի գաւառներում, ուստի չկամենալով կրկնել, կաւելացնեմ միայն հնտեսալիները.

Համբարձման չորեքշաբթի օրը կանայք «Փէլ» են անում, այսինքն իրենց հարսանների տներից կրակ են գողանում, որպեսզի իրենց կովերի կաթը աւելանայ:

Տեառնընդառաջին վառուած տակընդէղին մոխիրը տանում են կարանը շաղ տալիս՝ որպէսզի «չարը խափանուի», ածում են հաւարունը՝ որ հաւերը շատ ձռ ածեն, ցանում են անասունների վրայ՝ որ չոռից, ցաւից աղատուեն. ամուլ կանայք իրենց ուշառուի ժայրը վառում են այդ կրակի վրայ՝ որ որդի ունենան:

Կրակի անշէջ զանելու հաւատը մեացել է անթեղի սովորութեան մէջ.—երեկոյեան, երբ թօնիրը հետզհետէ հանգչում է՝ մի քակոր են զնում այդ հանգչող կրակի մէջ, որ կամաց-կամաց վառուելով մինչև միւս օրը՝ թօնրի կրկին վառելու ժամանակը տնէ:

Գուցէ աւելի որոշ լինելու համար հարկաւոր լինի շեշտել, որ օջախի և թօնրի սուրբ համարուելը, որանց վրայ կնունք և պատկ կատարելը, որանց անունով երգուելը այստեղ ևս դեռ մեացել է:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒԻՆՔ

Կատու. — Այս գաւառում ևս կատու սպանելը մեծ ժեղք է համարում և սպանողը եկեղեցական ապաշխարանքի է ենթարկուում. Այստեղ ևս, ինչպէս Զաւախբում¹⁾, պատմում է, որ կատուն Թրիստոսի ձեռքի թաշկինակից է յառաջացել՝ ամօթահար Մարմէտի քթից ընկած երկու անիծած մկները բռնելու:

Կատուն «մուրտառ» չէ, այլ «հալալ»—չեն գարշում, երբ նա մերձենում է կերակրներին, լիզում ամանները, մինչդեռ մկից, շնից գարշում են:

Չուն. — Սև շունը տան համար լաւ է համարում, որովհետեւ հալածում է չարերին:

Նա տիրում է, երբ տեսնում է մահուան հրեշտակը իրեն տիրոջ տանը մօտենալիս, ուստի և ոռնում է:

1) Տես իմ «Զաւախբի բուրմունք» էր. 68.